



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2011թ. մարտին /վերլուծություն/

2011թ. մարտին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 17152 գործարքներ, որոնց քանակը 2010թ. մարտի համեմատ աճել է 14.7%-ով, իսկ 2011թ. փետրվարի համեմատ՝ 15.6%-ով:

2011թ. մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2011թ. մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2011թ. մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3983 օտարման գործարքների 76.4%-ը կազմել են առուվաճառքները, 23.2%-ը՝ նվիրատվությունները և 0.4%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 38.8%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 40.0%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2011թ. մարտին, 2011թ. փետրվարի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 12.6%-ով, իսկ 2010թ. մարտի համեմատ՝ 1.1%-ով:

2011թ. մարտին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 68.9%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2011թ. մարտին, 2011թ. փետրվարի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 16.4%-ով, իսկ 2010թ. մարտի համեմատ՝ 14.7%-ով:

2011թ. մարտին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	մարտ 2010թ.	մարտ 2011թ.	փետրվար 2011թ.
Կենտրոն	469200	451600	442800
Արաբկիր	380000	348200	356100
Քանաքեռ-Զեյթուն	286100	269500	275200
Նոր-Նորք	237600	224800	228100
Ավան	239300	228200	231000
Էրեբունի	251400	234800	236300
Ծենցավիթ	252200	233000	237300
Դավթաշեն	274000	255600	261400
Աջափնյակ	240500	221100	222200
Մալաթիա-Սեբաստիա	240300	219500	221000
Նուբարաշեն	144300	148000	149000
Միջինը Երևանում /բազի Նորք-մարաշից/	274100	257700	260000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2011թ. մարտին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2011թ. փետրվարի համեմատ, նվազել են 0.9%-ով:

2011թ. մարտին մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 378 բնակարաններ, որոնց քանակը, 2011թ. փետրվարի համեմատ, աճել է 14.2%-ով, իսկ 2010թ. մարտի համեմատ՝ 3.0%-ով:

2011թ. մարտին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		մարտ 2010թ.	մարտ 2011թ.	փետրվար 2011թ.
Արագածոտն	Աշտարակ	142700	137400	134100
	Ապարան	44800	47400	46000
	Թալին	52800	58500	57500
Արարատ	Արտաշատ	91300	91600	93300
	Մասիս	128100	130600	131600
	Վեդի	94400	93600	94000
	Արարատ	87400	83500	84600
Արմավիր	Վաղարշապատ	158300	148800	150800
	Արմավիր	120200	124000	124800
	Մեծամոր	82200	84000	83600
Գեղարքունիք	Սևան	94600	88900	91000
	Գավառ	46400	48600	47700
	Մարտունի	85400	87500	86500
	Վարդենիս	33200	32400	31400
	Ճամբարակ	19500	21200	20600

Լոռի	Վանաձոր	90500	90400	89200
	Ստեփանավան	58200	61600	59800
	Մալտատ	81300	85800	83800
	Ալավերդի	31000	34500	33600
	Տաշիր	35600	38300	37000
	Թումանյան	6100	9400	6200
	Շամլուղ	3400	5700	3400
	Ախթալա	14100	16800	14400
Կոտայք	Աբովյան	160600	141700	145700
	Նոր Հաճն	126800	128200	130100
	Բյուրեղավան	100900	102600	105100
	Եղվարդ	117400	106800	109700
	Հրազդան	63400	60800	61200
	Ծաղկաձոր	181500	182000	177000
	Չարենցավան	76200	76600	76300
Շիրակ	Գյումրի	120300	109700	113500
	Արթիկ	59400	61200	63100
	Մարալիկ	30800	30200	30200
Սյունիք	Գորիս	139600	136900	139000
	Կապան	100600	101500	101500
	Սիսիան	79500	85000	84300
	Մեղրի	58700	63000	62000
	Ագարակ	33500	36500	34500
	Քաջարան	61100	62100	60400
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց Ձոր	Վայք	71600	73700	72000
	Եղնիզաձոր	105800	107900	110900
	Ջերմուկ	112600	125200	121000
Տավուշ	Դիլիջան	99300	106800	105700
	Իջևան	138700	132000	131500
	Բերդ	42000	44300	42300
	Նոյեմբերյան	33900	36200	34400
	Այրում	24100	25100	24200

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2011թ. մարտին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2011թ. փետրվարի համեմատ, աճել են 0.4 %-ով:

2011թ. մարտին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 370 առուվաճառքի գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 95, մարզերում միասին վերցրած՝ 275: 2011թ. մարտին, 2011թ. փետրվարի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 10.1%-ով, ընդ որում Երևանում՝ 13.1%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 9.1%-ով: 2010թ. մարտի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 12.9%-ով, ընդ որում Երևանում՝ 18.1%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 11.0%-ով:

2011թ. մարտին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինագված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	մարտ 2010թ.	մարտ 2011թ.	փետրվար 2011թ.
Կենտրոն	486300	471900	468800
Արաբկիր	386000	380600	378000
Քանաքեռ Զեյթուն	291100	280500	288900
Նորք Մարաշ	285300	280200	275500

Ավան	243300	240200	243000
Էրեբունի	255700	236200	244000
Շենգավիթ	255200	244300	249200
Դավթաշեն	280500	268700	274000
Աջափնյակ	246500	233400	239000
Մալաթիա Սեբաստիա	244500	229400	233600
Նուբարաշեն	147700	149200	150800
Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)	283800	274100	276800

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2011թ. մարտին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2011թ. փետրվարի համեմատ, նվազել են 1.0 %-ով:

2011թ. մարտին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		մարտ 2010թ.	մարտ 2011թ.	փետրվար 2011թ.
Արագածոտն	Աշտարակ	148000	139900	142600
	Ապարան	48200	47800	48700
	Թալին	55300	59800	57700
Արարատ	Արտաշատ	100600	101500	99500
	Մասիս	129900	135500	137500
	Վեդի	97000	97200	98300
Արմավիր	Արարատ	93500	87500	89100
	Վաղարշապատ	166500	161600	164300
Արմավիր	Արմավիր	125700	129500	131800
	Գեղարքունիք	Սևան	96500	95300
Գավառ		48700	51300	50500
Մարտունի		87800	88500	88800
Վարդենիս		35200	34600	34000
Ճամբարակ		21500	23000	23000
Լոռի	Վանաձոր	97500	101100	98000
	Ստեփանավան	61600	62100	63350
	Սպիտակ	83400	86500	86500
	Ալավերդի	35200	36000	36400
	Տաշիր	38700	41600	40300
	Թումանյան	10500	10800	10800
	Շամլուղ	7500	8000	7500
	Ախթալա	18200	18300	18300
Կոտայք	Արովյան	168700	155700	159200
	Նոր Հաճն	135100	134400	136500
	Բյուրեղավան	109600	107400	109400
	Եղվարդ	128200	112500	113700
	Հրազդան	65700	64500	65400
	Ծաղկաձոր	307600	315000	317400
Շիրակ	Չարենցավան	80400	78200	79500
	Գյումրի	124400	119900	122600
	Արթիկ	61600	62300	63900
Մարալիկ	Մարալիկ	31900	32700	32200

Սյունիք	Գորիս	144400	143000	143200
	Կապան	104600	105400	107600
	Սիսիան	84600	85400	86750
	Մեղրի	60700	65700	64150
	Ագարակ	35200	36600	35700
	Դաստակերտ	10500	10500	10500
Վայոց Ձոր	Վայք	74200	74400	75000
	Եղեգնաձոր	114900	111600	113000
	Ջերմուկ	118700	123100	122800
Տավուշ	Դիլիջան	103100	108400	110600
	Իջևան	142100	133000	135600
	Բերդ	44100	45900	43950
	Նոյեմբերյան	35500	37600	35850
	Սյրում	26000	26100	26100

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2011թ. մարտին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2011թ. փետրվարի համեմատ, նվազել են 0.7%-ով:

Ընդհանուր առմամբ, 2011թ. մարտին հանրապետությունում օտարվել են 1284 միավոր /1636.46 հա/ հողեր, որից Երևանում՝ 41 միավոր /4.29 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 724 միավոր /1543.63 հա/, որից Երևանում՝ 1 միավոր /0.21 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 411 միավոր /36.75 հա/, որից Երևանում՝ 31 միավոր /2.41 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 132 միավոր /12.46 հա/, որից Երևանում՝ 9 միավոր /1.67 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 14 միավոր /42.85 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 3 միավոր /0.76 հա/ :

2011թ. մարտին հանրապետությունում օտարված հողերից 1094 միավորի /1558.02 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 29 միավոր /3.36 հա/, նվիրատվության գործարքներ՝ 181 միավորի /75.29 հա/, որից Երևանում՝ 11 միավոր /0.69 հա/ և փոխանակության գործարքներ՝ 9 միավորի /3.16 հա/, որից Երևանում՝ 1 միավոր /0.23 հա/:

Հանրապետությունում 2011թ. մարտին, 2010թ. մարտի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 16.7%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 14.0%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 15.0%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 66.7%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Կոտայքի մարզում՝ 1142.16 հա, որից 1102.28 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 30.1%-ը կամ 329 գործարքներ /1154.42 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 3 գործարքներ /0.81 հա/, իսկ 68.6%-ը կամ 751 միավորը /398.78 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 25 միավոր /2.56 հա/: 2011թ. մարտին հանրապետությունում գրանցվել է հողերի կառուցապատման իրավունքի վաճառքի 14 գործարք /4.81 հա/:

Ստորև ներկայացվում է 2011թ. մարտին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների հողերը և կառուցապատման իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սնփականություն հանդիսացող								Մասնավոր սնփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	0	0.00	0	0.00	3	0.81	0	0.00	0	0.00	21	1.70	4	0.86
Արագածոտն	10	9.19	0	0.00	1	0.10	1	0.004	57	43.59	0	0.00	32	3.21	1	0.12
Արարատ	4	1.26	2	3.93	21	1.85	3	0.02	47	36.72	1	0.003	32	2.77	2	4.01
Արմավիր	5	13.58	1	0.35	0	0.00	4	0.02	64	33.89	0	0.00	43	4.26	9	0.07
Գեղարքունիք	9	8.69	1	2.28	1	0.11	15	1.65	41	17.52	0	0.00	19	2.39	1	0.01
Լոռի	0	0.00	0	0.00	3	0.09	17	0.20	83	61.36	0	0.00	15	1.58	2	0.01
Կոտայք	127	1072.80	5	32.58	26	1.86	7	0.11	79	29.48	1	0.10	71	5.04	4	0.18
Շիրակ	0	0.00	0	0.00	20	0.62	15	0.39	17	15.94	0	0.00	16	2.09	3	0.02
Սյունիք	0	0.00	1	0.11	0	0.00	2	0.09	37	116.17	0	0.00	4	0.16	0	0.00
Վայոց Ձոր	1	0.52	0	0.00	2	0.20	9	0.05	14	5.39	0	0.00	2	0.15	7	2.35
Տավուշ	1	0.14	0	0.00	7	0.61	5	0.22	10	6.57	0	0.00	10	0.96	2	0.10
Ընդամենը	157	1106.18	10	39.25	81	5.44	81	3.56	449	366.63	2	0.10	265	24.31	35	7.73

Ստորև ներկայացվում է 2011թ. մարտին պետական կամ համայնքային սնփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ նպատակային նշանակության.

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի								բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/		
Երևան	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	3	0.81	0	0.00	0	0.00	0	0.00	3	0.81
Արագածոտն	1	0.10	0	0.00	1	0.10	0	0.00	9	8.974	8	8.97	0	0.00	0	0.00	1	0.004
Արարատ	1	3.91	1	3.91	0	0.00	0	0.00	29	3.15	4	1.26	1	0.02	21	1.85	3	0.02
Արմավիր	1	0.002	0	0.00	0	0.00	1	0.002	9	13.95	5	13.58	1	0.35	0	0.00	3	0.02
Գեղարքունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	26	12.73	9	8.69	1	2.28	1	0.11	15	1.65
Լոռի	5	0.06	0	0.00	1	0.03	4	0.03	15	0.22	0	0.00	0	0.00	2	0.05	13	0.17
Կոտայք	12	1.161	0	0.00	11	1.16	1	0.001	149	1105.60	123	1072.22	5	32.58	15	0.70	6	0.10
Շիրակ	8	0.17	0	0.00	6	0.14	2	0.03	27	0.83	0	0.00	0	0.00	14	0.47	13	0.36
Սյունիք	2	0.09	0	0.00	0	0.00	2	0.09	1	0.11	0	0.00	1	0.11	0	0.00	0	0.00
Վայոց Ձոր	2	0.005	0	0.00	0	0.00	2	0.005	10	0.77	1	0.52	0	0.00	2	0.20	7	0.05
Տավուշ	5	0.47	0	0.00	5	0.47	0	0.00	8	0.50	1	0.14	0	0.00	2	0.14	5	0.22
Ընդամենը	37	5.97	1	3.91	24	1.90	12	0.16	286	1147.64	151	1105.38	9	35.34	57	3.52	69	3.40

Հանրապետությունում 2011թ. մարտին արձանագրվել են նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքների 6 գործարքներ /0.80 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2011թ. մարտին, 2010թ. մարտի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 53.8%-ով: Ընդ որում, Երևանում աճել է 3-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 52.2%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը աճել է 3.7 անգամ, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ աճել է 11.8%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել է 16.9%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 10.0%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	5	5.17	121.3	720.0	574.6	40	18.76	365.0	12000.0	4391.4
Ապարան						4	1.70	86.5	2727.3	616.6
Թալին	3	3.80	84.0	195.3	121.1	6	8.19	93.6	5494.5	565.5
Ծաղկահովիտ						4	13.79	79.5	1000.0	208.5
Արարատի մարզ										
Արտաշատ	3	1.20	80.4	85.5	82.1	1	0.08	335.1	10833.3	2525.0
Մասիս	1	0.06	400.8	400.8	400.8	16	19.93	200.0	11904.8	2825.1
Վեդի						30	16.71	207.0	10795.1	1766.0
Արմավիրի մարզ										
Արմավիր	3	8.68	62.9	63.3	63.1	43	22.63	294.3	9090.0	1485.5
Բաղրավան						4	2.65	90.6	2561.1	785.5
Վաղարշապատ	2	4.90	63.1	63.1	63.1	13	4.94	444.4	11764.7	2860.5
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	4	5.61	84.3	84.3	84.3	30	9.54	199.8	1875.0	366.0
Ճամբարակ								60.5	953.3	315.0
Մարտունի	2	1.17	110.3	136.4	123.3	1	0.12	51.1	2850.0	693.5
Սևան								52.2	2134.8	281.5
Վարդենիս	3	1.90	153.9	171.0	165.3	10	7.86	41.2	2575.1	400.0
Լոռու մարզ										
Այվերդի						2	0.84	170.4	6424.2	822.4
Գուգարք						5	1.49	234.6	6065.9	900.0
Սպիտակ						2	5.05	250.0	5555.5	680.0
Ստեփանավան						6	5.06	90.6	1686.6	300.0
Տաշիր						68	48.93	45.3	1384.4	152.5
Կոտայքի մարզ										
Աբովյան	11	13.77	260.0	1753.4	579.8	22	7.00	279.3	11942.7	4779.5
Եղվարդ	9	18.80	73.8	3179.7	688.8	52	19.01	174.4	11971.8	3318.4
Հրազդան	103	1039.65	33.9	74045.1	1328.7	5	3.47	130.5	10256.4	1960.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						6	5.20	252.0	1693.1	599.4
Անասիա								40.9	261.0	137.7
Անի						7	4.16	110.6	546.9	354.1
Աշոցք						2	4.58	58.5	215.8	107.2
Արթիկ						2	2.00	79.4	1428.6	318.8
Սյունիքի մարզ										
Գորիս						1	1.24	92.6	1023.2	600.0
Կապան								120.0	841.6	310.0
Մեղրի								193.0	3000.0	660.0
Սիսիան						36	114.93	46.3	1977.4	405.8
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	1	0.52	230.8	230.8	230.8	12	3.93	125.0	10000.0	1760.0
Վայք						2	1.46	58.8	1430.7	535.4
Տավուշի մարզ										
Բերդ								213.3	3783.8	622.3
Իջևան						2	0.86	267.5	9454.5	1185.5
Նոյնմբերյան	1	0.14	405.9	405.9	405.9	8	5.71	46.7	7368.4	900.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տնօրհանությունից և հողատնայնությունից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մավերներ /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մավերներ /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						26	22993.0	130.7	22200.0	2573.2
Ապարան						1	326.0	124.1	609.6	318.0
Թալին						3	5530.0	63.2	1454.8	152.3
Ծաղկահովիտ						1	2650.0	60.0	214.3	82.5
Արարատի մարզ										
Արտաշատ	17	16169.0	283.6	3265.4	459.0	2	1950.0	173.9	7140.3	894.0
Մասիս	4	2283.0	669.3	3287.2	1904.9	18	13780.0	187.5	25000.0	1210.0
Վեդի						12	11960.0	126.1	5000.0	662.0
Արմավիրի մարզ										
Արմավիր						27	28465.0	131.6	9090.9	1215.0
Բաղրամյան						1	1000.0	100.0	833.3	215.0
Վաղարշապատ						14	11926.0	197.4	26528.4	1530.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	1	1054.0	140.0	140.0	140.0	7	8640.0	186.6	1084.3	565.0
Ճամբարակ								71.3	2286.2	149.3
Մարտունի						9	11120.0	119.3	5000.0	275.0
Սևան						2	2200.0	240.0	3110.4	271.0
Վարդենիս						1	1979.0	72.5	987.2	150.0
Լոռու մարզ										
Այվերդի						3	4070.0	114.3	1388.9	215.2
Գուգարք	1	431.0	4750.2	4750.2	4750.0	2	1968.0	77.9	14083.3	925.5
Սպիտակ						8	8388.0	104.9	1348.3	200.0
Ստեփանավան						2	1390.0	88.2	1666.7	171.5
Տաշիր	1	98.9	282.7	282.7	282.7			45.3	400.0	84.3
Կոտայքի մարզ										
Աբովյան	5	3991.8	1543.5	3234.1	2470.9	34	23463.0	264.5	35353.5	1965.5
Եղվարդ	9	2548.0	1940.4	3127.5	2702.9	31	20580.0	173.6	27000.0	2838.4
Հրազդան	1	500.0	1302.0	1302.0	1302.0	5	5354.0	117.7	34848.5	1323.0
Շիրակի մարզ										
Ախուրյան	9	2976.0	554.7	3950.0	2687.6	11	15541.0	113.6	18750.0	330.9
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի	1	400.0	375.0	375.0	375.0	1	1065.0	67.9	180.6	145.8
Աշոցք								40.8	144.0	60.0
Արթիկ	4	1365.0	250.0	579.4	332.3	4	4261.0	111.8	5000.0	216.5
Սյունիքի մարզ										
Գորիս						1	70.0	112.2	1700.0	362.7
Կապան								67.9	2638.9	272.0
Մեղրի						1	600.0	68.5	632.9	172.5
Սիսիան						1	170.0	123.5	875.0	182.8

Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	2	2000.0	752.0	755.3	753.7	2	1546.0	96.7	7659.6	497.2
Վայք								120.7	1448.3	192.3
Տավուշի մարզ										
Բերդ								75.8	810.0	100.0
Իջևան	2	1431.0	3000.0	3000.0	3000.0	9	7901.0	74.1	14423.1	502.8
Նոյնեբերդյան						1	1700.0	125.0	1948.1	200.0

2011թ. մարտին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել է նախկինում անհատույց սեփականաշնորհման 13 գործարքներ 5.31 հա մակերեսով, ընդ որում 7-ը՝ /1.59 հա/ Կոտայքի, 4-ը՝ /3.49 հա/ Տավուշի և 1-ական՝ /0.11 հա/ Լոռու, /0.12 հա/ Սյունիքի մարզերում:

2011թ. մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 858 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 5.0%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 89.6%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2011թ. մարտին, 2011թ. փետրվարի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 23.8%-ով, իսկ 2010թ. մարտի համեմատ նվազել՝ 17.3%-ով:

2011թ. մարտին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 56 բնակարանների, 36 անհատական բնակելի տների, 405 հասարակական, 52 արտադրական նշանակության օբյեկտների, 296 միավոր /1474.46 հա/ հողերի, 13 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2011թ. մարտին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 8 վարձակալության գործարքների /այդ թվում 5 միավոր՝ 0.01 հա, կառուցապատման իրավունքով/ քանակը 2011թ. փետրվարի համեմատ աճել է 2.0 անգամ, իսկ 2010թ. մարտի համեմատ նվազել 46.7%-ով: 2011թ. մարտին հանրապետությունում վարձակալված 1474.46 հա հողերից 0.38 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 1474.08 հա հողերից 23.97 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Լոռու մարզում՝ 743.02 հա, որից 742.93 հա գյուղատնտեսական նշանակության: 2011թ. մարտին հանրապետության մարզերում վարձակալվել են 1448.90 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2011թ. մարտին հանրապետության մարզերում գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունը.

Մարզի անվանումը	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	8	10.84
Արարատ	6	48.83
Արմավիր	2	17.31
Գեղարքունիք	51	138.00
Լոռի	129	742.93
Կոտայք	3	3.24
Շիրակ	9	12.11
Սյունիք	4	467.04
Վայոց Ձոր	5	2.07
Տավուշ	5	6.53
Ընդամենը	222	1448.90

2011թ. մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2354 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 14.8%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների

պետական գրանցումների քանակը, 2011թ. փետրվարի համեմատ, աճել է 35.9%-ով, իսկ 2010թ. մարտի համեմատ՝ 29.2%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /46.4%/, առանձնատների /25.9%/, հասարակական նշանակության օբյեկտների /11.8%/ և հողերի /10.3%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1124 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2011թ. փետրվարի համեմատ, աճել է 37.7%-ով, իսկ 2010թ. մարտի համեմատ՝ 30.4%-ով:

2011թ. մարտին հանրապետությունում գրավադրվել են 282.74 հա հողեր, որից 5.14 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 95.0%-ը կամ 268.59 հա գյուղատնտեսական նշանակության են, որոց 0.54 հա՝ Երևանում: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արարատի մարզում՝ 118.03 հա, որից 116.82 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2011թ. մարտին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 257 գործարքներ, որից 188-ը՝ Երևանում: Ընդ որում, հիփոթեքային գրավադրման գործարքների 84.4%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 12.5%-ն՝ անհատական բնակելի տների, 1.2ական%-ը՝ հասարակական նշանակության օբյեկտների և հողերի, 0.8%-ը՝ այգետնակների նկատմամբ: 2011թ. փետրվարի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 73.6%-ով, ընդ որում Երևանում՝ 56.7%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 2.5 անգամ: 2010թ. մարտի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 59.6%-ով, ընդ որում Երևանում՝ 59.3%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 60.5%-ով:

2011թ. մարտին հանրապետությունում ապապետականացման միջոցով մասնավորեցման գործարքներ չեն արձանագրվել:

2011թ. մարտին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 2685 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2011թ. փետրվարի համեմատ նվազել է 1.5%-ով, իսկ 2010թ. մարտի համեմատ աճել՝ 2.9%-ով: Առաջնային գրանցումների տնտեսարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 15.7%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /26.9%/:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե